

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
N ԿՈՏ-ԾՁԲ -12/13-ՆՊ**

ք. Տրապիզոն

29 հուլիսի 2013թ.

Կոտայքի մարզպետարանը, գործելով մարզպետարանի կանոնադրությամբ, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Գարեգինյանի այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Նվարդ Պետրոսյանը ՀՎՀՀ- 40515857, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1.Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատուցել ներկայացուցչական ծախսեր /այսուհետև՝ Ծախսեր/, իսկ Պատվիրատու պարտավորվում է ընդունել այդ Ծախսերը և վճարել դրա համար:

1.2. Ապրանքի մատակարարումն սկսվում է պայմանագրի ստորագրման պահից:

1.3.Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1. Կատարողը Ծառայությունը հասցնում է Գնորդին:

3.Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1.Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1.Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ծառայությունից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

3.1.2.Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող Ծառայություն

ա/Պահանջել հատուցելու Ծառայության անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ/Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ծառայությունով անհատույց ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ/Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը.

3.1.3.Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ծառայություն, ապա.

ա/պահանջել լրացնելու Ծառայության պակաս հանձնված քանակը,

բ/հրաժարվել հանձնված Ծառայությունից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ծառայության համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4.Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ծառայություն, իր ընտրությամբ՝

ա/ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ծառայությունը և հրաժարվել մնացած Ծառայություններից.

բ/հրաժարվել հանձնված բոլոր Ծառայություններից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով

նախատեսված տույժը.

գ/պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ծառայությունների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ծառայություններով.

3.1.5. Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայության մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վճարողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6. Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էական խախտել է սույն պայմանագիրը:

3.1.7.1. Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/մատակարարվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ/բազմիցս խախտվել են Ծառայության մատակարարման ժամկետները.

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ծառայությունների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Կատարողի հանձնած Ծառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ծառայության պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին.

3.2.3. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Ծառայությունն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ծառայությունը.

3.3.2. Պատվիրատուից պահանջել հատուցելու վնասները, եթե Կատարողը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վճարել է Ծառայություն՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4. Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ծառայությունը: Վաղաժամկետ մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված Ծառայությունը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ծառայության քանակի հաշվին:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. Պատվիրատուին հանձնել Ծառայությունը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ծառայությունը Պատվիրատուին մատակարարել